ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<Երևանի Հ.Կարապետցի անվան հ. 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» առարկայի ուսուցչի / 6 դասաժամ / , տեխնոլոգիայի 2 ուսուցչի / 9-ական դասաժամ /, ինֆորմատիկայի ուսուցչի /5 դասաժամ/, ռուսաց լեզվի ուսուցչի / 8 դասաժամ / և քիմիայի ուսուցչի / 8 դասաժամ / թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/
2. մեկ լուսանկար 3×4 չափի
3. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
4. Անձը հաստատող փաստաթուղթ
5. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
6. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
11. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ հունվարի 15-ից մինչև հունվարի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա 2024թ փետրվարի 1-ին՝ ժամը 13:00 - ին, Երևանի Հ.Կարապետցի անվան հ. 6 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան,Ս.Դավթի 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 45-38-00 հեռախոսահամարով: